

ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՅ. ՕՐՇՆՅԱԼ Է ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ (ՈՒՍՈՑՎՈՒՄ «ԶԱՏԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ» Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ)



Փառատոնի շրջանակում բաց դասեր անցկացրին ուսուցչուհիներ Լուսինե Պետանյանը և Օմիկնար Մարգարյանը, հայկական շուրջպարի վարպետության դաս տվեց Անահիտ Հարությունյանը:

ների կողմից պատրաստվող ավանդական կերակրատեսակները և դրանց պատրաստման առանձնահատկությունները: Երեխաները հաճույքով մասնակցեցին փառատոնին, հյուրասիրվեցին մայրիկ-



Ապրիլի 17-ին Հայ առաքելական եկեղեցին նշեց Սուրբ Հարության տոնը: Դոնի Ռոստոմի հայ համայնքի ուսուցիչների ջանքերով այս տարի կազմակերպվեց համադարձակա «Զատնական փառատոն» ընդգրկելով լրացուցիչ կրթության կենտրոնի «Արևիկ» հայերենի խմբակների աշակերտներին (Ռոստոմի թիվ 19 գիմնազիա, 13 լիցեյ, թիվ 61, 83, 110 դպրոցներ, ուսուցչուհիներ Լուսինե Պետանյան, Անահիտ Հարությունյան, Արմինե Հովսեփյան, Լիլիթ Թևոսյան, Օմիկնար Մարգարյան), Աքսայ քաղաքի «Արարատ» հայերենի խմբակի աշակերտներին, Պուշկինի անվան մանկական մոդելային գրադարանի (ուսուցչուհի՝ Լուսինե Պետանյան) և Լենինի անվան մանկական գրադարանի հայերենի խմբակների սաներին (ուսուցչուհի՝ Արմինե Հովսեփյան):



**Քրիստոս հարեավ ի մեռելոց,
Միայն երեք բառ ի լուր աշխարհին,
Ի ուրախություն բոլոր — բոլորին:
Բայց մեծն հրաշք. Աշխարհում մինչ արդ
Իր մահից հետո չի կենդանացել
Երբեք ոչ մի մարդ:
Բայց «մարդ» եմ ասում, և ոչ թե ԱՄՏ-ՎՄՄ,
Որը Հայր Աստծո սիրուց էր ծնված,
Ծնված կույս մորից, ապրած տանջանքով,
Օրինակ ի ցույց իր ամբողջ կյանքով,
Կյանքով, որը կարճ, ավա դ, կարճ տևեց,
Եվ իր Հոր կամքով Նա մահ ընդունեց՝
Իր հետ տանելով մեղքերն աշխարհի՝
Մարդկանց թողնելով մաքուրն ու բարին:
Բայց կենդանացավ, խորհուրդը տվեց
Եվ գնաց գիրկը՝ հավերժի, լույսի...
Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:
Մերյոժա ԹԱՄՄԱԶՅԱՆ
բ. Շախտի**



Ուսուցիչներն երեխաներին պատմեցին տոնի խորհուրդը, խոսեցին հայկական հին ավանդույթներից ու սովորույթներից, որոնք, ցավոք, այժմ դուրս են մղվել մեր կենցաղից: Ցույց տվեցին իրենց ձեռքով պատրաստած Պահքի խորհրդանիշ համարվող հայկական ծիսական տիկնիկներին՝ Ակլատիգին, Նուրիին, Ուտիս տատին, Պաս պապին: Ներկայացրեցին գատիկի տոնի կապակցությամբ քրիստոնյա-

ների կողմից պատրաստված Չատիկի կերակուրներով, քաղցրավենիքներով, խաղացին գատական խաղեր՝ «Չուկոտրոցի», «Չուկոտրիկ», «Չուկոտոցի»... Ընդհանրապես ուսուցիչներին, ծնողներին ու աշակերտներին՝ պատասխանատվությամբ ու ջանասիրտաբար այս գեղեցիկ համադարձակա փառատոնը կազմակերպելու համար:
Պատրաստեց Աիդա ԱԶՆԱՎՈՒԴՅԱՆԸ

ԵՂԵՆԻՑ ՀԱՌՆԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ



Քայլել է հայ ժողովուրդը պատմության քառուղիներով ու մարտնչել է նա, ընկել է ու բարձրացել քրտինքը տալով հողին ու քարին, ու նրա ձեռքում միշտ էլ եղել է շինարարի մուրճը: Կառուցել է, չի քանդել:

Քայլել է հայի ամպրոպածեծ քարավանը: Նրա հանճարեղ որդիներն առաջնորդել են անտեր ժողովրդի քարավանը և հասցրել մինչև մեր դարաշրջանի դռները: Եվ անա 20-րդ դարի շեմին քիչ էր մնում գլխատվեր մեր հայ ժողովուրդը, երբ եղեռնի առաջին հարվածն իջավ նրա գլխին:

1915 թվականին երիտթուրքական կառավարության կողմից նախօրոք մշակված և կիրառված ցեղասպան քաղաքականության հետևանքով մեր ազգը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առաջ: Առաջադեմ մարդկության ներկայացուցիչները դատապարտում էին բարբարոսային ցեղասպանությունը և պահանջում դադարեցնել այն: Մակայն հրոսակախմբերը շարունակում էին չար խորշակի պես քանդել մեր բիրկական հողը: Ամենուրեք մխուժ էին հայոց վանքերը, հազարամյակներ ապրած մեր մագաղաթները: Այրվում էր հողը մեր խաչապաշտ, կոտորվում էր ծաղկող գարնան սպասող մի ամբողջ ժողովուրդ:

Հրաշքով փրկվածները՝ քաղցից ու ծարավից ծայրաստիճան հյուծված ու ոսկրացած, ուրվականների նման, հայտնվում էին անապատներում իրենց ետևում թողնելով անթաղ դիակներ ու անեծքով պղծված ոճրագործների հայաձանքները: Հազարավոր մանուկների մայրերի խլացած սրտերը լցված էին անմար վրեժով:

Շատ զավակներ կորցրեց հայ ժողովուրդը ցեղասպանության տարիներին: Թվում էր, թե հայ մայրը կխելագարվի որդու կորստից, բայց այդպես չեղավ, նա որդու փոխարեն իր գրկում պահած Արևմտյան Հայաստանից Արեվելյան Հայաստան բերեց ասեղնագործ մատյանը, որի էջերը կորած զավակի աչքերի կապույտ գույնն ունենին: Շատ դառը հետևանքներ թողեց եղեռնը, փոթորկեց հայոց անխռով ոգին: Թուրքական յարթահանից բազմաթիվ հայեր ցրվեցին աշխարհով մեկ... Հայերի շուրթերին ավելացավ սփյուռք բառը:

Բարբարոսները քանդեցին ինչ որ կարող էին, պղծեցին ինչ չէին կարող քանդել: Հայ ազգը տունը տվեց, բայց հոգին ոչ: Թշնամին հողն առավ, բայց հայի հոգին անառիկ էր... Փորձում էին իրենց անողորմ ձեռքերով սրբել մեր գործը հետքերը ավերելով մեր դարավոր հուշարձաններն ու քաղաքները: Բայց հայ, ժողովուրդը հաղթահարեց այդ ցավը՝ նորը կառուցելով: Բսկ ինչպես ս հաղթահարի միլիոնավոր զոհերի դիակական կակիծը: Այդպես էլ չսպիացավ հայի վերքը...

Այս ողբերգությունն այսօր իրենն է համարում ողջ մարդկությունը: Եղեռնը ոտքի հանեց բոլորին, ու օրեցօր, նոր սերնդի մեջ կաթիլ առ կաթիլ լցվեց ատելությունը թշնամու հանդեպ:

Տասամյակների շարունակ Հայաստանը տուն է կանչում իր հարազատ որդիներին, որ հայտնվել են աշխարհի տարբեր անկյուններում:
Չուր չի ասել մեր մեծ բանաստեղծ Գևորգ Էմինը. «Մենք երազ ունենք կատարելու և վրեժ ունենք պատմությունից դեռ հանելու»: Այո, մենք բոլորս էլ վրեժ ունենք լուծելու և երազ ունենք կատարելու: Հայ ժողովրդի ոգին անթեղված կրակն է բոցավառվող հույսի: Դու եղել ես, կաս ու կլինես, իմ հայ ժողովուրդ:

Լիանա ԳԵՎՈՐԳՅԱՆ